# ՊԱՏՄԱԿԱՆ

## ԸՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՉԸԿԻՐՔ· ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՑԻՈՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ·

(Շ—ր—Ն—ի—Ր—Ն):

Ամորի Ա, Վերջերորդ Թագաւոր Երուսաղէմայ 1162—1173:

Պրտվէն Գ, իշխան խելացի, քաջ, արդարադատ, պարկեշտ, հմուտ գիտութեանց մանաւանդ յօրէնս պետութեան, մեռաւ ի Պէրութ ի 10 փետրվարի 1162, ի հասակի 33 ամաց՝ չը թողլով յաջորդ իւր Թէոդորա կնոջից, որ էր եղբօր դուստր Մանուէլ Կայսեր:

Ըստ յանձնարարութեան Պրտվէնի, իւր կրտսեր եղբայր Ամորին, որ էր իշխան Ցոպպէի եւ Ասկալօնի՝ յաջորդեց իւրեան: Ամորի Ա, ծայրայեղ գիրութեամբն *) էր պաղ, զգաստ, քաջ, գործունեայ եւ ուսեալ, թէ եւ մի բանի մասին արժան ոչ համարեն զրուատանաց, այն է որ մի կոյր վստահութիւն ունէր Միլօն մի անծի վերայ, որին անուանեալ էր Սէնէշալ անարժանաբար:

Նուրդին-Աթաբէգն Հալէպի, զոր Արեւելեան եւ Արեւմտեան պատմագիրք ի միասին նկարագրեն ոթէ միայն մի երեւելի մարտական, այլ որ առաւել մեծարելին է՝ որպէս տիպար մաքրութեան եւ արդարութեան, որոյ աղագաւ Մուսուլմանք յարգեն նորա ընտիր բարեպաշտութեան յիշատակն ճառելով նորա համար, որ նորա հոգւոյ վեհութիւնն կից էր սրտի խոնարհութեան հետ, — որպէս տեսանք՝ Երուսաղէմայ Թագաւորութեան առաջին Թշնամին էր: Բայց զկնի մահուան իւր յամի 1174, դուրս եկաւ մի նոր տիեզերակալ ամենահեղ ախոյեան քրիստոնէից եւ միակ այն անձն, զոր Աստուածային Տեսչութիւնն սահմանեալ էր կործանել Երուսաղէմայ Թագաւորութիւնն. նա ինքն է Սալահէտտին, կոչեցեալ յառաջագոյն Եուսուֆ եւ հիմնիչ Այուբեան **) հարստութեան: Նախ պաշտօնեայ էր Նուրդինի, բայց ապա գնալով յԵգիպտոս՝ իւր հօրեղբօր Ասֆադտինի հետ 1169 ին եղեւ վէզիր խէլիֆային եւ ի մահուան Էրէդ Լիդինիլլահի, չորեքտասաներորդ Ֆաթմա խէլիֆայի ի 1171 ամի, տակնուվերայ արաւ խէլիֆայութիւնն:

Սոյն յեղափոխութիւնս, որ եղեւ ի Թագաւորութեան Ամորի Ա· արժանի է մի քանի տեղեկութեանց: Եգիպտոսի վերջին Ֆաթմա խէլիֆայք այնքան անզօր իշխանք էին *), որ ստիպուած էին վճարել Երուսաղէմայ Թագաւորութեան տարեկան 50,000 ոսկի հարկ: Ի միում նուագի մերժեցին վճարել այդ գումարդ, որով մի պատճառ հայթայթեցին Ամորիին պատերազմ հրչակել: Ի 1163, Նուրդին ուղարկեց մի գունդ յԵգիպտոս յօգնականութիւն Քաւուր վէզիրի, որ կը մարտնչէր ընդդէմ իւր իշխանութեան եղող Թշնամեաց մէկի հետ: Օժանդակ գուգազն հաստատելով զՔաւուր վեզիր, վերջինս զլացաւ յղել Նուրդինին խոստացեալ հարկն, այս ինքն Եգիպտոսի եկամտից երիր մասն: Այդ մերժումդ արտադրեց մի պատերազմ, յորում Ամորի պատրեալ ի փաղաքշական բանից Քաւուրի, նմա կողմնակից հանդիսացաւ: Աստի ծագեց նոր իմն պատերազմ ի մէջ Նուրդինի եւ Քրիստոնէից: Ի 1164 ամի Աթաբէգն ի փախուստ դարձրաւ զՔրիստոնեայս եւ գերեց Անտիոքայ իշխան Բօէմոնդ Գ-ն (որդի Բայմոնդի) Տրապօլսոյ եւ Եդեսիոյ կոմսքն, բայց ոչ կարաց առնում զԱնտիոք Ամորիի վերադարձի պատճառաւ: Նուրդին դաշնադիր եղեւ-յայնժամ Իկոնիոյ սուլթանի եւ Պաղդատի Սիւնիի խէլիֆայի հետ նուաճել զԵգիպտոս: Սոյն տիրապետութիւնս խափան առնելու աղագաւ, որ չարաբաստիկ հետեւանք պիտի արդասաւորէր Երուսաղեմայ համար, Ամորի իւր բոլոր զօրութեամբ մտաւ յԵգիպտոս 1167 ին, եւ դաշնակցութիւն կապեց ընդ Քաւուրի եւ Ատէդ խէլիֆայի: Քրիստոնէից Թագաւորն հասանելով ի Գահիրէ՝ Ասֆադդին եւ իւր եղբօրորդի Եուսուֆն (Սալահատտին) կեղծ փախստեամբ շրջեցին զնա: Բայց Ամորի յանդուգն շարժմամբ

(*) Pinguis erat supra modun, ita ut more feminoe mammielas haperet cingulo tenus promènentes. Գիլյոմ. Տիր. XIX, 3.

**) Այուբ իւր հոգ անուն էր:

(* Սոքա էին, Մուաբաթ Թամէն Մուսթանսէր թիլլահ, 1036—1094, Ահմէդ աբուլգասմ Մուսթաալա թիլլահ 1094—1101. Մէնսուր աբու Ալի Ամէր Բիահքամիլլահ, 1101—1130. Հաֆէտ Լէդինիլլահ, 1130—1150. Ճաֆէր Բիադամրայի 1150—1153. Ֆաճէ Բիհարիլլահ, 1153—1160 Ադէդ Լէդինիլլահ 1160—1171:

ծղեց Թուրքաց Բէրէն եւ Լամոնիոյ մէջ տեղ ու պատերազմ տուաւ ի 18 մարտի 1167ի: Երկկողմեան զօրքն յաղթեցին ի միասին: Ջկնի մարտին՝ Ալֆէդդին գնաց ի վերին Եգիպտոս եւ իւր եղբօրորդին առաւ զԱղէքսանդրիա. սակայն Ամօրի ամրան սաստիկ պաշարեց զայն, որ ի վերջոյ Եուսուֆ անձնատուր եղեւ երեք ամսէն զկնի ի 20 Օգոստոսի 1167ի: Շիրքուհ յայնժամ մի դաշն կռեց, որոյ զօրութեամբ ըստացաւ 50,000 կտոր ոսկի եւ թողեց զԵգիպտոս, փոխադարձաբար ազատելով բոլոր բանտարկեալքն:

Փառասէր Ամօրին անկղմտանալով Եգիպտոսի բարերեր արդեանց վերայ՝ ցանկացաւ նուաճել այդ երկիրը: Ապահով լինելով Մանուէլ կայսեր եւ Ասաբնջականաց մեծ կարգապետի օգնութեանց վերայ, մտաւ Եգիպտոս 1168 ին. բայց լսելով Շէրքուհի դալուստը յօգնականութիւն խէլիֆային՝ հարկադրեցաւ վերադառնալ, թէ եւ խէլիֆայի վերայ շատ թանդ նստեց նորա ծառայութիւնն: Քաւուր, որին ստութեամբ մատնիչ ամբաստանեալ էին, զլխատեցաւ եւ Ատէդ անուանեց մի վկայագրով Ալֆէդդին Շէրքուհին իւր վէզիր, որին յաջորդեց իւր եղբօրորդի Սալահէդտինն Մէլիքան Նասր կամ օգնական արքայի մականուամբ:

Այսպէս Երուսաղէմայ թագաւորութիւնն պատեալ էր ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ՝ եւ ի հարաւոյ՝ Ասաբէկի ինքնակալութիւնով: Երկիցս Ամօրի ձեռն արկաւ նուաճել զԵգիպտոս նպաստիւք ցունաց, բայց երկպառակութիւնն եւ ցունաց սխալանքն ի չիք դարձրին նորա դիտաւորութիւնքն. ուստի արքայն պարտաւորեցաւ վերադառնալ ի Պաղեստին:

Ի բազում նուագս ստիպանօք օգնութիւն հայցեց սպապէն եւ Ֆրէտէրիկ կայսրէն*), պատճառ որ՝ Երուսաղէմ Նուրդինի եւ Սալահէդտինի կողմէն մեծ վտանգի էր ենթարկուած զկնի վերոգրեալ եղելութեանց. այս անգամ եւս իւր յոյսերն ապարդիւն եղեն պապի եւ կայսեր մէջ տիրած դժտութեանց առթիւ: Հատանելով իւր յոյսն Ամօրի դնաց ի Կ. Պոլիս առ կայսրն Մանուէլ ի 1171 ամի, ուր ամենափառահեղ կերպիւ ընդունուեցաւ եւ խոստացաւ հպատակել կայսեր եթէ նա իւր թագաւորութիւնն առանց վտանգի կացուցանէ: Սոյն ուղեւորութիւնս ընդունայն եղեւ եւ Երուսաղէմայ վտանգն եւս առաւել բազմացաւ:

Սակայն Նուրդին կասկածանք կրելով Եուսուֆէն՝ հրամայեց նմա ծգել յիշխանութենէ բոլոր Իսմայէլեանքը կամ Իսմամն եւ արգելուլ մզկթաց մէջ Եգիպտոսի Խէլիֆայի անունն կարդալէն. վերջինս ոչ կարաց կրել այդ դժբախտութիւնդ եւ մեռաւ ի 1171 ամի, որով վերջացաւ Եգիպտոսի խէլիֆայութիւնն, բայց մեծ Դենպետական պաշտօնն անցաւ Բաղդատի խէլիֆայից. իսկ Իսմամների պաշտօնն յանձնեց Սիւնի ողջափառաց: Ապա պահանջելով Նուրդին Սալահատդինէն Եգիպտոսի բոլոր զօրքն, երբ նա զանազան բաղդաղանք մերժեց՝ պատերազմ մօտ էր ճայթելու Ասաբէգի եւ վէզիրի մէջ, երբ մահն վերայ հասանելով վերջ դրաւ Նուրդինի կենաց ի 22 Մայիսի 1173, թողլով մի որդի մետասանամեայ Մալէհ-Իսմայիլ անուամբ: Ցետ Ասաբէգի մեռաւ եւ Ամօրի ի 11 Յուլիսի 33 հասակում:

## Պըուվէն Դ. Էմանուէլ Ռոյ-ը Երուսաղէմայ ի 1173 — 1185:

Պըուվէն Դ. որդի Ամօրայ յաջորդեց իւր հօր: Գեղեցիկ դաստիարակութիւն էր առած Գիյլոմ ատենադպրէն, որ ապա եղեւ արքեպիսկոպոս Տիւրոսի եւ յօրինիչ մի ընտիր խաչակրաց պատմութեան: Բայց որովհետեւ դոյն իշխանդ դեռ երեքտասանամեայ էր եւ մի անբժշկելի կարծեցեալ հիւանդութեամբ ճարակեալ (եղեփանդական բորոտութիւն, éléphantiasis), ուստի կարեւոր էր խնամակալ ունենալ: Միլոն Սէնէշալ թագաւորութեան դրաւեց խնամակալութիւնն. բայց 1174 ամի սպանուելով, ի սեպհոց համաձայնութեամբ ստանձնեց այդ պաշտօնդ Բայմոնդ Տրապօլսոյ կոմսն, որ նոր ազատեալ էր ի գերութենէ վճարելով 80,000 ոսկի: Պըուվէնի թագաղ-

(*) Ֆրէտէրիկ Ա. Պարպարոսա կայսրն յաջորդ կոնրադ Գ.ի եւ երրորդ դուքս տանն Հոհէնստոֆէնի. սա էր մին յերեւելի եւ հռչակաւոր թագաւորաց Գերմանիոյ, որ երկար ժամանակ մաքառեց ընդդէմ պապական անիրաւ պահանջմանց: Զափաւոր յամենայնի, քաջ թէեւ պատերազմատեաց, բարերար, արդար. նա ամենայն բանում արդարութեամբ եւ ուղղութեամբ վարուեց. մի բան միայն յանդիմանելի է նմա, որ առաւել ծառայեց Իտալիոյ քան իւր հայրենեաց: Ընտրուեց կայսր 18 Մարտ 1152 յԷքսլա Շաբէլ ի հասակի 31 ամաց: Ընկերացաւ երրորդ խաչակրութեան, որպէս տեսանելոց եմք ի ստորեւ. այդ արշաւանաց մէջ մեռաւ նա ի 10 Յունիսի 1190 խեղդուելով մի գետի մէջ: Նա անցաւ եւ Կիլիկիայէն ի թագաւորութեան Լեւոնի, թողելով ի նմանէ պաշար եւ ուտեստ:

Տահ. Թարգ:

բութենէն երէք ամսէն զկնի զօրաց հրամանատարութիւնն եւ Թագաւորութեան աեսչութիւնն Խօթ արքայի փոխան յանձնեցին Բընոլդ Շատիյլոնի, Անտիոքայ Նախկին իշխանին, որ ստացեալ էր իւր ազատութիւնն ի 1177 ամի:

Որովհետեւ անմարթ էր նորատի արքայի ամուսնութիւնն, ուստի իւր հարազատ քեռ. ծեռն տուին Գիյլոմի, սահմանակոմին Մոնտֆէրայի, որոյ միակ արժանաւորութիւնն էր Գաղղիոյ եւ Գերմանիոյ վեհապետաց ազգական լինելն: Գիյլոմ զրաւելով ի կենաց ի 1177 ին, իւր ամուսինն ծնաւ մի որդի, որ անուանեցին Պրտվէն:

## Սալահդին հէնէ զ լանոդրաց էնդնելրէն.

Զկնի մահուան Նուրդինի բազում վէզիրք վիճեցան իւր որդւոյ Սալէհ-Իսմայիլի խնամակալութեան մասին: Եուսուֆ, որ յայսմ հետէ կոչեմք Սալահդին յափշտակեց զայն զինու զօրութեամբ 1175 ին. ապա մի դաշնադրութիւն առնելով իւր Սալէհ-Իսմայիլի Հալէպի ամարէզութիւնն եւ Մէյֆուդդինի Նուրդինի հօրեղբօրորդւոյ Մուսուլի ամարէզութիւնն: Իսկ Նուրդինի ինքնակալութեան մնացեալ մասն իւրեան պահեց ի կնութիւն ածելով Նուրդինի Իզմէթուդդին կողակիցն: Հուսկ յետոյ յանձնելով Դամասկոսի կառավարութիւնն իւր եղբօր Շամսուդդին Թիմուրտաշին, չոքաւ բնակիլ Յեգիպտոս: 25 Նոյեմբերի 1178, Սալահդին մի մեծ կոտորած ընդունեց ի Քրիստոնէից, Թէեւ հետեւեալ տարու Մայիսի 26 ին մի փայլուն յաղթութիւն արաւ նոցա վերայ: Ցայնժամ մի զինադուլ եղեւ Սալահդինի եւ Երուսաղէմայ Թագաւորութեան մէջ, որ քրիստոնեայք եղծեցին ճեպով անպատշաճ ծանծաղամտութեամբ:

1181 ին Սալէհ Իսմայիլ մեռանելով Սալէհդին զրաւեց զՀալէպ եւ նուաճելով զԵդեսիա, զՆիսիբիա եւ Միջագետաց մի մեծ մասն հիմնեց մի ահագին ինքնակալութիւն, որոյ զօրութեան առաջեւ ի տարապարտուց Պրտվէն Դ. օգնութիւն աղերսեց Անգղիոյ եւ Գաղղիոյ Թագաւորներից:

Թագաւորութեան կրած աղէտից հետ միացան եւ այլ դժբախտութիւնք վրդովելու արքայի վերջին տարիքն: Իւր քոյր Սիբիլն, որը Գիյլոմ սահմանակոմսի 1180 ին ամուսնացաւ ընդ Գուեյտոն Լուսիյնանի Յօժարութեամբ արքայի, բայց ի մեծ տհաճութիւն մեծամեծաց եւ ժողովրդեան, տանելով ընդ իւր օժիտ Ասկաղոնի եւ Յոպպէի կոմսութիւնքն: Երբ արքայն 1183 ին իւր հիւանդութեան առթիւ, որ բոլորովին զրկել էր իւր անդամոց կիրարկութենէն, ընտրեց իւր փեսան խնամակալ, մեծամեծքն, որ արդէն սաստիկ նախանձուել էին Լուսիյնանի վերայ Քրիստոնէից կրած մի փախուստն պատճառ բռնելով ստիպեցին Պրտվէն անուանել իւր յաջորդ Գիյլոմ Մոնտֆէրայի Պրտվէն որդին, որ Թագաւորուեց զկնի մի քանի աւուրց. ապա այնքան բարուրանք դիզեցին Լուսիյնանի վերայ, որ արքայն կարգեց մի դատարան վճռել Սիբիլի ամուսնութիւնն. բայց Գուեյտոն զլանալով զալ յատեան, արքայն զէնք առաւ նորա դէմ եւ անուանեց զՐայմոնդ Տրապօլսոյ կոմսն խընամակալ դեռաւուրց Պրտվէնի: Բայմոնդ միայն հետեւեալ Թէութեամբ ստանձնեց. իւր խնամակալութեան շրջանն լինէ տասն ամ. իւր անձն ազատ պիտի մնայ նորատի արքայն դաստիարակելոյ: Եթէ Պրտվէն Ե. մեռանէր նախ քան իւր յարբունս հասանելն անյաջորդ՝ Պապն, Կայսրն, Գաղղիոյ եւ Անգղիոյ Թագաւորքն պիտոյ է ընտրէին նորան ժառանգն, եւ մինչ ցդայլուստ նորա Բայմոնդ պահելու է խնամակալութիւնն: Զօրութեամբ այս սահմանադրութեան, Բէրութ քաղաքն յանձնեցաւ Բայմոնդին եւ Սէնէշալ Ճօսլին, անուանակիր կոմս Եդեսիոյ նշանակեցաւ դաստիարակ մանկահասակ արքայի:

Երբ 16 Մայիսի 1185 մեռաւ Թագաւորն իւր եւթնամեայ քեռորդին յաջորդեց Պրտվէն Ե. անուամբ. Բայմոնդ փութաց զինադուլ առնել ընդ Սալահդինի, որով Երուսաղէմ զերծաւ ի սովոյ, քանզի երկար ժամանակէն ի վեր երաշտութիւն կը տիրէր: Իւր խնամակալութիւնն միայն 15 ամիս տեւեց նորատի արքայի մահուան առթիւ յամսեանն Սեպտեմբերի 1186 ի Տիբէրիա, յորմէ փոխադրեցին մարմինն յԵրուսաղէմ: Ուստի Բայմոնդ կոչեց Թագաւորութեան պետութիւնքն ի Նէապոլիս խորհրդակցել ընտրութեան վերայ, յանձնելով որ իւրեան պիտի ընտրեն յաջորդ: Բայց Յոպպէի կոմսուհին Սիբիլ իւր Լուսիյնան անապարանոր դալով Յերուսաղէմ. նպաստիւր պատրիարգին Հերակլէի եւ Տաճարապետ Թիէրի Թագադրուեց դշխոյ Երուսաղէմայ. հուսկ յետոյ անմիջապէս Թագաւոր հրատարակելով եւ իւր ամուսինն:

Գ-էոն Լ-էյնան ինքերդ ընտ-որ երուսաղ-մայ ե-ոն այդ տաղ-էն է Սալահդինայ յամ 1187:

Այդ իշխանի անընդունակութիւնն եւ մեծամեծաց մէջ տիրեալ երկպառակութիւնն եղեն զօրաւոր եւ անմիջական պատճառք Երուսաղէմայ կորստեան: Բընոյդ Շատիյլոն աներկիւղ եւ արի ասպետ, բայց ծանծաղամիտ եւ խռովարար մուսուլմանաց մի կարաւանի վերայ յարձակուելով, ուր կը գտանուէր եւ Սալահդինի մայրն բանտարկեց զնոսա. ի տարապարտուց եղեւ Սալահդինի ճիգն խնդրելով, որ պատժուէ յանցաւորն կամ գոնէ ազատուին բանտարկեալքն, ուստի խզելով խաղաղութիւնն պատերազմ յայտնեց եւ արշաւեց Թագաւորութիւնն 30,000 անձամբք:

Ի մի ճակատամարտի, կոչեցեալ ի Քրիստոնէից Տիբերական իսկ յարեւելեայց Հիդէն 3—5 Յուլիսի 1187 Քրիստոնեայք բնաւին խորտակուելով Գուիտոն Թագաւորն, Բընոյդ ճոսլին Սէնէշալն, Տաճարապետն եւ յոլով ասպետք ի գերութիւն վարեցան. ճշմարիտ խաչն որ պաշտպան էր Քրիստոնէից կորաւ ի մարտի: Սալահդին ընդունեց այդ տարաբախտն կարի մարդասիրութեամբ ի բաց առեալ զիշխանն Կրաքայ Բընոյդ Շատիյլոն պատճառ եւ հեղինակ պատերազմի, որ իւր յատուկ ձեռամբ սպանեց: Տաճարականաց եւ ասպնջականաց բնաւ ասպետք, որքան կեալք էին անհաւատից ձեռքն խեղդուեցան: Հետզհետէ Տիբերիա, Սիդոն, Նազարէթ, Բաամա, Հեպլոն, Բէթղեհէմ, Լիդդա, Եաֆա, Նապլուսա, Բէրութ, Աքեայ եւ Կրաք անկան յաղթողի ձեռաց մէջ: Ասկալոն, ուր ապաստանեալ էր Թագուհին անձնատուր եղեւ այն պայմանաւ, որ Լուսիյնան եւ իւր եղբայր Բոնիֆասն, Տաճարապետն եւ այլ 15 ասպետք ազատուին: Թագաւորն խոստացաւ զէն մի կրել Սալահդինայ դէմ եւ պաշտօնապէս հրաժարեց Երուսաղէմայ Թագաւորութենէն:

20 Սեպտեմբերի Սալահդին երեւաց Երուսաղէմայ առաջեւ. ընդունայն էր ընդդիմադրութիւնն եւ կառավարիչն՝ որ էր Բաղիան Ամօրի առաջնոյն Մարիամ կնոջ ամուսինն անձնատուր եղեւ 2 Հոկտ. 1187: Բնակչաց Թոյլ տուին գնալ յերկիրս քրիստոնէից իւրեանց կայքով, կամ մնալ յԵրուսաղէմ յապահովութեան. երկու պարագայում եւս պիտոյէ վճարէին մէն մի գլխոյ համար տասն բիւզանդեան ոսկի. ուստի 5000 բնակչաց մասին վճարեցաւ 50,000 կլոր բիւզանդեան ոսկի: Ս. գերեզմանն անշօշափելի մնաց. ամենայն Քրիստոնեայ իրաւունք ունէր յայց ելանել վճարելով մի բիւզանդեան ոսկի: Իսկ այն բնակիչք, որ զկնի 40 աւուրց չվճարէին իւրեանց փրկանաց գինն յաղարտ պիտի վարուէին: Սակայն Սալահդին զիջանելով այս խստութիւնից սկսեց ինքն ողորմութիւն բաժանել եւ իւր առատաձեռն յաղթող ձեռից չքաւորագոյնքն ընդունեցին 220,000 բիւզանդեան ոսկի:

Ի Պաղեստին Երուսաղէմայ առմանէն զկնի Քրիստոնեայք ունէին միայն երեք ամրաքաղաք—Անտիոք, Տիւրոս եւ Տրապօլիս: Սալահդին պաշարեց ըզ-Տիւրոս. որ մերձ էր անձնատուր լինելոյ, երբ Կոնրադ Մոնտֆէրա եղբայր Սիբիլի առաջին ամուսնոյն յանդիման եղեւ եւ խոստացաւ փրկել քաղաքն եթէ զայն տային իւրեան սեպհականութիւն: Իրօք իւր ի կիր արկեալ խորամանկութեամբ եւ ցուցած քաջութեամբ փրկեց քաղաքն:

## ԳԼ. ՎԵՑԵՐՈՐԴ.

## Էրբրդ Խաչակրութիւն 1189—1217:

Գոյժ առմանն Երուսաղէմայ շարժեաց համայն զԵւրոպա: Գրիգոր Ը.*) առաքինի եւ խելացի քահանայապետ իւր երկամսեայ վեհապետութեան ժամանակ իւր ամենայն ճիգն թափեց յեռանդ ածել զիշխանս յաղագս Քրիստոսի սուրբ գերկրին: Կղեմէս**) յաջորդի օրօք եղեւ երրորդ խաչակրութիւնն. պատճառ որ, սոյն քահանայապետս այնքան անհրաժեշտ եցոյց զայն կայսեր, որ Ֆրէտէրիկ Թէեւ վաթսունամեայ ընդունեց խաչակրութիւնն յաւագաժողովն Մայանսայ 1188 ամի: Քառասուն տարի յառաջագոյն իւր Կոնրադ հօրեղբօր ընկերանալով ի Պաղեստին կարողացեալ էր անձամբ դատել թէ ոյք էին քրիստոնէից անյաջո-

(*) Ուրբանոս Գ. պապն առաջնթաց Գրիգոր Ը. ի կամենալով բանադրել զՖրէտէրիկ կայսրն Գերմանիոյ Երուսաղէմայ առման լուրն առնելով սաստիկ ցաւից մեռաւ, որին յաջորդեց Գրիգոր Ը. ի 20 Հոկտ. 1187. բայց երկարատեւ չեղեւ իւր իշխանութիւնն, այլ մեռաւ ի միեւնոյն ամի:

(**) Կղէման Գ. Հռովմայեցի յաջորդեց Գրիգորին 1187 եւ մեռաւ 1191 ամի մարտի 27 ին. սա վերջացոյց 1188 ին 45 տարէն ի վեր Հռովմայ հանրապետութեան եւ պապերի մէջ եղած վէճն:

Դաւ. Թարգ.

ղութեան պատճառքն, վասն որոյ մի հրաման հրատարակեց որ միայն համճարեղ զինակիրք եւ ճանապարհի ծախուց համար բաւականին գումար ունեցող անձինք կարող են խաչակրուիլ. բաց ի սմանէ ի բանակցութիւն մտաւ ընդ Թագաւորին Մաճառստանի, ընդ կայսեր Յունաց եւ Սուլթանին Իկոնիոյ, որոյ երկրի միջից պիտի անցանէր: Գլիճ-Ասլան, որ յառաջագոյն ցանկացեալ էր Ֆրէտէրիկի բարեկամութեանն, խոստացաւ հայթայթել խաչակրաց ուտեստ եւ պարէն: Իտալիոյ քաղաքաց հրաման եղեւ եռամեայ պաշար բերել նաւուք յԱսիա:

1189 Մայիսի սկզբներում բոլոր նուիրեալ մարտականք ժողովեցան ի Ռատիսբոն. ասպետաց թիւն 20000 էր. զանազան իշխանք ընկերացան կայսեր, որպէս իւր կրտսեր որդի Ֆրէտէրիկ Սուաբի դուքսն եւ այլ արքայազունք, կոմսք, սահմանակալք: Կայսրն մտաւ ի նաւ Դանուբ գետի վերայ, իսկ ճամբարն յառաջ խաղաց ի ցամաքի՝ ընդհանուր ժամադրութիւնն նշանակուելով յաւուր Պենտեկոստէի ի Բրէսբուրգ:

Բէլա Հունգարիոյ արքայն դիմաւորեց զկիր հիւրերըն. երկու վեհապետաց մէջ բարեկամութիւնն մի ամուր կապ ստացաւ Սուաբ դքսի հարսնախօսութեամբն ընդ դստեր Թագաւորին Հունգարիոյ, թէ եւ նորատի արքայորդւոյ վաղահաս մահն խափան եղեւ այդ ամուսնութեան. Ի Պէլգրատ կայսրն զօրահանդէս արաւ. 50000 ասպետ գտաւ եւ ի միասին 100000 մարտականք: Ի Բուլգարիա զօրքն մի քանի թշնամական գործողութիւնք տեսաւ, բայց մեծ եղեւ խաչակրաց միացումն տեսանելով Իսահակ Անգեղոս *) կայսեր հակառակորդ վարմունքն. այս իշխանս կարծելով որ խաչակրաց դիտաւորութիւնն է զինքն գահընկէց առնել խնայեց տալ նոցա որ եւ իցէ պաշար, որոյ աղագաւ պարտաւորեցաւ Ֆրէտէրիկ սփռել իւր զօրքն ընդ ամենայն տեղիս առնելով զՖիլիպուպօլ, Ադրիանուպօլ եւ այլ բազում քաղաքս. այդու ամենայնիւ հարկ եղեւ ձմերել յեւրոպա: Այս կայսրից մի նամակ, որ դեռ մնայ, հաստատէ թէ ի Կ. Պօլիս պատրիարգն յեղանելով յամբիոն գրգռէր ժողովուրդն ասելով որ հարիւր խաչակրաց սպանմամբ կարեն տասն սպանութեան մեղաց քաւութիւնն ստանալ: Իրաց վիճակն յայն աստիճան դժուարացաւ, որ Ֆրէտէրիկ հրամայեց իւր Հենրիկոս որդւոյն, որ կառավարէր զԳերմանիա ի բացակայութեան իւր, բռնադատել Ջենուայի վենետիկոյ հանրապետութիւնքն գալ եւ պաշարել զԿ. Պօլիս. ի հակիրճ բան, Յոյնք զիջան ի հարկէ, Իսահակ խոստացաւ անցուցանել զօրքն յԱսիա եւ իւր Իրէն դուստրն նշանադրեց Փիլիպպին կայսեր հինգերորդ որդւոյն:

Զօրքն մտանելով յերկիր Սէլճուգեանց լաւ ընդունելութիւն գտան. բայց յընթացս չուոյ անհանգիստ եղեւ ի Տաճկաց, որք պատճառ եղեն մեծամեծ կոտորածոց: Բազմիցս առ ի չգոյէ պաշարի եւ ջրոյ՝ ստիպուեց ուտել ձի եւ ըմպել կենդանեաց արիւնն: Սակայն Սուլթանի դեսպանքն կառաջնորդէին կայսեր յայտնելով թէ իւրեանց տէրն անկար է զսպել հուռկահարաց դաշնակցութիւնն, բայց ի 14 Մայիսի 1190 շուտով իրազեկ եղեն սուլթանի դաւաճանութեան, հանդիպեցան նորա զօրաց որ ամենասակաւ չափազանցութեամբ 500.000 հաշուեն: Ֆրէտէրիկ խրախուսեց զօրքն ասելով, որ միայն արութիւնն կարէ փրկել զմեզ. եպիսկոպոսք հաղորդեցին զհաւատացեալս եւ զօրքն յարձակեցաւ Սէլճուգեանց վերայ. որոց 10.000 սպանուելով մնացորդքն փախստական եղեն, թէեւ յաղթող զօրքն ոչինչ ձեռն չը ձգեց զովաւքանցի պակասէին ուտեստ եւ ջուր անդադար կրեալով յարձակմունք: Բայց Սուաբի դուքս Ֆրէտէրիկն եւ Հօլլանտիոյ կոմս Ֆլօրանն մի փայլուն յաղթութիւն տանելով Մայիսի 18 ին խորտակեցին Իկոնիոյ դրունքն, ուր եւ գտին մի մեծ գումար արծաթի եւ առատ պարէն: Գլիճ-Ասլան ներողութիւն խնդրեց կայսրէն եւ խաղաղութիւն հայցեց. իւր խնդիրքն ընդունուեցաւ տուաւ պատանդ եւ ուղեցոյց եւ հայթայթեց զօրաց ուտելիք, որ սկսաւ շարժիլ Մայիսի 23 ին:

(Շ—ր——ն—կելի):

Թ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

---

(*) Իսահակ Անգեղոս մի մեծատոհմ անձ էր ի Կ. Պօլիս. երբ խոյս տալով Անդրոնիկոս կայսրից ապաստանեցաւ յեկեղեցին սրբոյն Սոֆիայի, ժողովուրդն սպանելով զԱնդրոնիկոս հրատարակեց զնա կայսր 1185. բռնութեամբ ակտր, զեղխութիւն սիրող էր. բայց 1195 ին իւր եղբայր Ալեքսի Անգեղոս փակելով զնա մի խաւարին բանտի մէջ կուրացոյց, թէեւ ինքն էլ ոչ կարաց վայելել իւր սերի պտուղն: Իսահակայ որդին խոյս տալով գաղանապէս օգնութիւն խնդրեց ի Լատինացւոց, որք պատրաստվում էին կատարել մի չորրորդ խաչակրութիւն: Լատինացիք գալով առին զԿ. Պօլիս եւ մեծին Կոստանդիանոսի գահի վերայ դրին մի Լատին կայսր, որով Յունաց կայսրութիւնն մինչ 200 տարի մնաց Լատ. ձեռաց մէջ:

Ծան. Թարգ.